ԴՍԵՂ ՀԱՄԱՅՆՔ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ

ԳԵՆԴԵՐԱԶԳԱՅՈՒՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՁԵԿՈՒՅՑ

BEARR

2020
www.ngoc.am

ngo center

Հետազոտությունն իրականացվել է «Կանայք հանուն լավ կառավարման» ծրագրի շրջանակներում: «Կանայք հանուն լավ կառավարման» ծրագիրն իրականացվում է ՀԿ Կենտրոնի կողմից: Ծրագիրը ֆինանսավորվում է The BEARR Trust փոքր դրամաշնորհների շրջանակներում:

Հետազոտությունն իրականացրել են Դսեղ համայնքի երիտասարդական նախաձեռնող խմբի կողմից:

Հետազոտության նպատակն է պարզել Դսեղ համայնքի առավել կարևոր հիմնախնդիրները, բնակչության մոտեցումը լուծում պահանջող հիմնախնդիրների առաջնահերթություններին, տարբերակել այդ առաջնահերթությունները կախված սեռից և տարիքից, չափել տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության մակարդակը:

Հետազոտությունն իրականացվել է 18 տարեկանից բարձր բնակչության շրջանում, հարցաթերթի հիման վրա՝ դեմ առ դեմ հարցման միջոցով:

Աշխատանքային խումբ՝
Աշխատանքները համակարգող՝ Վահե Խաչիկյան
Վերլուծություն պատրաստող՝ Անի Ղուլինյան
Հարցազրուցավարներ՝ Անի Ղուլինյան, Ռուզաննա Թավադյան, Սյուզի Ղուլինյան, Աննա Բեգլարյան, Կարինե Ավետիքյան

Մեթոդաբանություն

Հետազոտությունն իրականացվել է քանակական մեթոդաբանությամբ։ Որպես քանակական մեթոդ իրականացվել է դեմ առ դեմ հարցում Դսեղի 18 տարեկանից բարձր իգական և արական սեռի ներկայացուցիչների շրջանում։

- Ընտրանքային համախմբությունը՝ 68 հարցվող
- Անկեղծության մակարդակ՝ 95%
- Ընտրանքի սխալ՝ 12%
- Բնակչությանը՝ 2247

Ժողովրդագրական բաժին

Ընտրանքի փաստացի ծավալը կազմել է 68 ռեսպոնդենտ: Տարածական առումով ընտրանքը ներառել է ողջ Դսեղ համայքնը: Հարցվողների շրջանում առավել մեծ թիվ են կազմել կանայք 56%-ը, իսկ





տղամարդիկ `44%: Տարիքային առումով գերակշռում են 46 և ավելի տարիք ունեցողները՝ 41%, իսկ ամենապասիվը 18-25 տարեկաններն են՝ 15%:

Հարցվողների զգալի մասը՝ 27%-ը ունի միջին մասնագիտական կամ թերի բարձրագույն, իսկ 18%-ը՝ բարձրագույն կրթություն:



Այս հետազոտությունը ցույց է տալիս, որ ռեսպոնդենտների մեծ մասը ՝ 81% պասիվ է տեղական ինքնակառավարմանը մասնակցության առումով և երբևէ որևէ առաջարկություն կամ պահանջ չի ներկայացրել ՏԻՄ-ին:



Հարցումը ցույց տվեց նաեւ, որ միջնակարգ կրթություն ունեցող հարցվողները ավելի հաճախ են առաջարկություն կամ պահանջ ներկայացնում՝ 38%:



Համայնքային ենթակառուցվածքների վերաբերյալ կարծիքները մեամասամբ «լավ» կամ «բավարար» են: Ամենաշատը «անբավարար» գնահատել են հանրային գրադարանի (20.5%) այնուհետև ամբուլատորիայի (18%) վիճակը: Թանգարանը միակն է, որ «անբավարար» չի որակվել ոչ մի անգամ, իսկ հարցվողների 43%-ը դրա գործունեությունը գնահատել է «գերազանց»:

ենթակառուցվածք	գերազանց	լավ	բավարար	անբավարար	Չունենք
դպրոց	5	42	19	2	
մանկապարտեզ	5	32	25	6	
արվեստի դպրոց		7	8	2	51
հանրային գրադարան	1	24	29	14	
թանգարան	29	36	3		
ամբուլատորիա	3	22	24	12	7
մշակույթի տուն	5	33	24	6	
սպորտային խմբակներ	4	32	20	10	2
Երիտասարդական կենտրոն	2	30	20	9	7

Համայնքային խնդիրներից որպես մշակույթի տան խնդիր ամենահաճախը նշվել է Գույքի և երաժշտական գործիքների հնամաշությունը (68 հարցվողից 32-ը), իսկ մանկապարտեզինը՝ ուսումնական պրոցեսի ոչ լիարժեք կազմակերպումը(31) պատասխան:



Մանկապարտեզի խնդիրների մեջ առանցքային են նաև սանիտարահիգենիկ վիճակը, գույքի և խաղալիքների վատ որակը:



Գյուղատնտեսությանը վերաբերող խնդիրները նշելիս 68 հարցվողներից 28-ը խնդիր է համարել ռեսուրսների/տեխնիկայի անբավարար լինելը, 23-ը՝ ոչ բերրի հողը, իսկ 22-ը մթերման կետի բացակայությունը:



Հետազոտության արդյունքները ցույց են տալիս նաև, որ գյուղացիների մեծ մասը երիտասարդության ամենակարևոր խնդիր համարում է գործազրկությունը (43 պատասխան), իսկ երկրորդ տեղում արտագաղթն է(31 պատասխան): Կանանց խնդիրները նշելիս ևս առաջին տեղում է գործազրկությունը՝ հարցվողների 75%-ը այն ներառել է կանանց վերաբերող երեք ամենակարևոր խնդիրների մեջ: 69%-ն էլ իր պատասխանը մեջ նշել է արտագաղթը, որպես տղամարդկանց վերաբերող խնդիրներից մեկը:





Երիտասարդների խնդիրները համայնքում



- երիտասարդության գործազրկություն
- կրթության/ինքնազարգացման հնարավորությունների սահանափակությունը
- ազատ ժամանակն անցկացնելու ընտրության բացակայություն
- ֆինանսական բարդ կացություն
- երիտասարդության հանդեպ մեծահասակների կողմից խտրականության դրսևորում
- լարված փոխհարաբերություն ծնողների հետ
- արտագաղթ
- ինքնարտահայտման հնարավորությունների պակաս
- ձեռնարկատիրական մտածողության պակաս
- քաղաքացիական պատասխանատվության պակաս
- սպորտային գործունեության համար նախատեսված վայրերի և հնարավորությունների պակաս
- ապաքաղաքականացված երիտասարդություն (նրանք հետաքրքրված չեն քաղաքականությամբ, ներգրավված չեն դրանում, չեն քվեարկում)

Պատասխանների նույնատիպ բովանդակությունը արտահայտված է նաև գյուղի ամենակարևոր երեք հիմնախնդիրները նշելիս: Հարցվածների 50%-ը, խնդիր իրա պատասխանում ներառել է աշխատատեղերի բացակայությունը, 47%-ը արտագաղթը: Իսկ օրինակ ՏԻՄ լիազորությունների շրջանակներում գտնվող ծառայությունների թերի կատարումից հարցվողները ամենաշատը նշել են աղբահանությունը (44%):



Հարցումները ցույց են տալիս, որ համայնքային կյանքին առավել ակտիվ մասնակցում են 36 և ավելի տարիք ունեցող արական սեռի ներկայացուցիչները, իսկ 46 և ավելի տարիքային խմբի կանայք ամենից պասիվն են այս հարցում:



Համայնքում տեղի ունեցող իրադարձությունների մասին բնակիչների մեծ մասը տեղեկացնում է Ընկերներից և Ընտանիքից, և ամենաքիչը՝ պաստառների ու թռուցիկներից:



ՏԻՄ-երին երբևէ առաջարկություն ներկայացրածները կազմում են ընդհանուր հարցվողների 24%-ը:



Նրանց մեծ մասը հակված է իր առաջարկությունը ներկայացնել բանավոր և ավելի հազվադեպ՝ ավագանու անդամների միջոցով:
Միևնույն ժամանակ երբևէ առաջարկություն/հարց ներկայացրածների միայն 48%-ն է ստացել իր պատասխան կամ լուծում իր հարցին:





Երբևէ առաջարկությամբ չդիմածների մեծ մասը որպես պատճառ նշել է այն, որ դրա անհրաժեշտությունը չի եղել: Իսկ Նրանց 10%-ը ՏԻՄ-ի հանդեպ անվստահությունը համարել է չդիմելու հիմնական պատճառ:

Ըստ Ձեզ, կանանց ակտիվ ներգրավվածությունը համայնքային կառավարման գործընթացներում կարո՞ղ է նպաստել համայնքի առջև ծառացած խնդիրների լուծմանը հարցին ռեսպոնդենտների մեծ մասը նշում է այո: Հետաքրքրական է, որ հարցված արական սեռի ներկայացուցիչներն ավելի շատ են կարծում, որ կանանց ներգրավվածությունը կարող է նպաստել խնդիրների լուծմանը և միևնույն ժամանակ հարցվածներից «ՈՉ» պատասխանողների մեջ գերակշռում է իգական սեռի ներկայացուցիչների թիվը:



Նախորդ հարցին այո պատասխանողները հարցին, թե ինչպե՞ս կարող են կանայք նպաստել խնդիրների լուծմանը նշել են, որ կանայք կազմակերպված են: Այս պատասխանը գերակշռում է, թե հարցող արական, թե իգական սեռի ներկայացուցիչների պատասխաններում:



Հարցմանը մասնակցող արական և իգական սեռի ներկայացուցչները նշում են, որ պատրաստ են ընտրել կին համայնքի ղեկավար:



Եզրակացություններ

Իմի բերելով հարցումների արդյունքները, կարող ենք առանձնացնել մի քանի եզրահանգումներ

- Դսեղ համայնքում բնակչության մեծամասնությունը տեղական ինքնակառավարմանը չի մասնակցում, տեղեկացված չէ համայնքում իրականացվող միջոցառումների մասին և հազվադեպ է առաջարկությունն կամ պահանջ ներկայացնում ՏԻՄ-ին: Սրա հիմնական պատճառ կարելի է համարել իրազեկվածության և ՏԻՄ-երի նկատմամբ վստահելիության ցածր մակարդակը:
- Համայնքային ենթակառուցվածքները հիմանակնում գտնվում են լավ կամ բավարար վիճակում և կատարում են իրենց հիմնական գործառույթները: Այնուամենայնիվ այդ կառույցներ մեծ մասը ունեն աշխատանքի որակը, շենքային պայմանները, որոշները նաև ուսումնական պրոցեսի կազմակերպումը բարելավելու կարիք:
- Երիտասարդների, կանանց ու տղամարդկանց խնդիրների հիմանական պատճառ բնակչությունը համարում է գործազրկությունը, ազատ ժամանակն անց կացնելու ընտրության տարբերակների բացակայությունը:
- Գյուղատնտեսության վերբերյալ խնդիրները գյուղացիները պայմանավորում են անբավարար ռեսուրսներով ու տեխնիկայով, ոչ բերրի հողով, անբավարար արոտավայրերով կամ մթերման կետի բացակայությամբ:
- Կանանց տեղական ինքնակառավարմանը մասնակցելու վերաբերյալ բնակչության մեջ դեռևս առկա են կարծրատիպային մոտեցումներ, կապված կնոջ համար սահմանված գենդերային դերերի հետ: Հարցվողներից շատերը համարում են որ որշում կայացնողների շարքերում լինելը և այդ գենդերային դերերի ստանձնումը անհամատեղելի են: Այնուամենայնիվ որպես դրական միտում կարելի է արձանագրել այն, որ հարցվողների մեծամասնությունը կին համայնքապետի թեկանածու ունենալու դեպքում չի բացառում նրան ընտրելը: